

9-րդ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԸՍՏ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՓՈՐՁԱՐԿՎՈՂ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ

«Կենսաբանություն» առարկայի 9-րդ դասարանի պետական ավարտական քննության համար որպես հիմք և սկզբնաղբյուր է ընդունվում ուսումնական նոր չափորոշիչը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023թ մարտի 30-ի N 29-Ն հրաման, «Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Կենսաբանություն» առարկայի 7-9-րդ և 10-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչ»:

«Կենսաբանություն» առարկայի 9-րդ դասարանի պետական ավարտական քննական թեստերում ընդգրկված են առարկայական նոր ծրագրերի ծավալին և բովանդակությանը համապատասխանող առաջադրանքներ, որոնք համապատասխանում են հետևյալ չորս հիմնական գաղափարներին .

1. Բոլոր կենդանի օրգանիզմների կառուցվածքային միավորները բջիջներն են, որոնք կազմված են մոլեկուլներից:
2. Կենդանի օրգանիզմները փոխազդում են միմյանց և իրենց շրջապատող անկենդան աշխարհի հետ:
3. Օրգանիզմներն օժտված են ժառանգականությամբ և փոփոխականությամբ:
4. Կենսաբազմազանությունն առաջացել է էվոլյուցիայի արդյունքում:

Թեստի կառուցվածքը

Թեստը բաղկացած է 35 առաջադրանքից, որոնցում ընդգրկված են առարկայական ծրագրերի թեմաները և լաբորատոր աշխատանքները: Թեստում առաջադրանքները, ըստ կառուցվածքային տեսակների և առաջադրանքներին տրվող միավորների, բաշխված են հետևյալ համամասնությամբ՝

Աղյուսակ 1

Քննական թեստի առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի

| Հ/հ | Առաջադրանքները ըստ ներկայացման ձևի | Առաջադրանքների քանակն ըստ մասերի | Առաջադրանքների բաշխումն ըստ միավորների |
|-----|------------------------------------|----------------------------------|--|
| 1. | ընտրովի պատասխանով | 22 | 22 |
| 2. | կարճ պատասխանով | 12 | 12 |
| 3. | ընդարձակ պատասխանով | 1 | 1 |
| 4. | ընդամենը | 35 | 35 |

Քննական առաջադրանքների կառուցվածքային տեսակները, գնահատման չափանիշները և պատասխանների լրացման կարգը

1. Ընտրովի պատասխանով առաջադրանք

Ընտրովի պատասխաններ են պահանջում 1-22-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավորով: Այս առաջադրանքներում ձևակերպվում է պահանջը և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտը:

Նմուշ. Ո՞ր կենսաբանական պոլիմերի մոնոմերն է ամինաթթուն:

- 1) նուկլեինաթթվի
- 2) սպիտակուցի
- 3) գլիկոգենի
- 4) օսլայի

Ձևաթուղթը լրացնելու կարգը: Պատասխանների ձևաթղթում ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևում տրված են համապատասխան թվով վանդակներ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում դնել «X» նշանը: Օրինակ՝ եթե առաջին առաջադրանքի ճիշտ պատասխանը 3-րդն է, ապա ձևաթղթում պատասխանը պետք է նշել հետևյալ ձևով՝

| | |
|---|-------------------------------------|
| | 1 |
| 1 | <input type="checkbox"/> |
| 2 | <input type="checkbox"/> |
| 3 | <input checked="" type="checkbox"/> |
| 4 | <input type="checkbox"/> |

Ընտրովի պատասխանով առաջադրանքների համար պատասխանների ձևաթղթում կա ուղղման 2 հնարավորություն:

2. Կարճ պատասխանով առաջադրանք.

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքներում (23-34-րդ) անհրաժեշտ է գրել պահանջվող թիվը, բառը, բառակապակցությունը: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Նմուշ. Քանի՞ ողից է բաղկացած մարդու ողնաշարի կրծքային բաժինը:

Պատասխան՝ _____

Ձևաթուղթը լրացնելու կարգը: Պատասխանների ձևաթղթում կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի համարի մոտ տրված է վանդակ, որտեղ անհրաժեշտ է գրել ճիշտ պատասխանը: Օրինակ՝ եթե 24-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 12 է, ապա ձևաթղթում պատասխանը պետք է նշել հետևյալ ձևով՝



Կարճ պատասխանով առաջադրանքների համար պատասխանների ձևաթղթում կա ուղղման 2 հնարավորություն:

3. Ընդարձակ պատասխանով առաջադրանք.

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքը մեկն է՝ 35-րդը, որի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Քննության տևողությունը 120 րոպե է:

Թեստ-գրքույկի դատարկ մասերը օգտագործվում են սևագրության համար: